

Ա. Վ. ՄՈՒՇԵՂՅԱՆ. Մովսես Խորենացու դարը, *Երևան, ԵՊՀ հրատ., 2007, 412 էջ:*

1902 և 1903 թվականներին «Հանդես ամսօրյա» պարբերականի տարբեր համարներում լույս տեսան անգլիացի նշանավոր հայագետ և մեծ հայասեր Ֆրեդերիկ Գոնիբերի թղթակցություն-հոդվածները, որոնք վերաբերում էին Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ օգտագործված աղբյուրներին և մեր պատմահոր ապրած ժամանակին: Հոդվածները, ըստ էության, ուղղված էին հիմնականում երկու հայագետների՝ Գր. Խալաթյանցին և Ա. Կարիերին, որոնք Մովսես Խորենացուն համարում էին մեծ կեղծարար և նրան էլ «ոսկեդարից» տեղափոխում մի քանի դարով ավելի ուշ ժամանակահատված: Ըստ որում, Ֆ. Գոնիբերը ջերմ վերաբերմունք ուներ ֆրանսիացի հայագետ Ա. Կարիերի նկատմամբ, ավելին, նրան համարում էր իր մեծ բարեկամը, սակայն վերջինիս հակախորենացիական դիրքորոշումը ստիպեց Գոնիբերին լրջորեն զբաղվելու Մովսես Խորենացու ապրած դարաշրջանի և նրա պատմության վավերականության խնդիրներով՝ նպատակ ունենալով հայերի պատմահորը վերադարձնել հայ միջնադարում ունեցած տեղը՝ V դար: Գոնիբերն իր ընդդիմախոսության վերջում լիահույս է, թե ինքն ավարտել է այն անհեթեթ բանավեճը, որ սկսվել է Լակրոզից և ժամանակ առ ժամանակ նոր զարգացումներ է ստանում, հանգիստ կարող է շարունակել հայագիտությանը նվիրված իր գործունեությունը և չպղտորվել անիմաստ վարկածներից ու «գրուտերից»:

Ֆ. Գոնիբերը վախճանվել է 1924 թվականին, սակայն, ցավոք, այդ բանավեճը շարունակվում է՝ ստանալով նոր զարգացումներ: Ըստ որում, շատ մեծ թիվ են կազմում

եվրոպացի այն հայագետները, որոնք բնավ էլ կասկած չունեն Մովսես Խորենացու ապրած ժամանակի ընդունված ավանդական հինգերորդ դարի վերաբերյալ: Նրանցից են Ֆելիքս Նևր, Վիկտոր Լանգլուան, Էդուարդ Դյուլոնդին, Մարի Ֆելիստե Բրոսսեն, Ֆրեդերիկ Մակլերը ու, վերջապես, Ֆրեդերիկ Ֆեյդին և ուրիշներ: Վերջինս նույնիսկ զարմանում է, թե ինչու որոշ հայագետներ փորձում են Մովսես Խորենացուն ներկայացնել որպես ուշ շրջանի հեղինակ այն դեպքում, երբ Խորենացու հաղորդածները մեծ մասամբ հավաստի են ըստ այլ պատմիչների հաղորդածների<sup>2</sup>:

Այս համառոտ նախաբանն ասվեց, որպեսզի կարևորվի այն գիրքը, որ կոչվում է «Մովսես Խորենացու դարը» և որի հեղինակն է բազմազգիտակ ու քաջահմուտ բանասեր Ալբերտ Մուշեղյանը:

Ծավալուն է Ա. Մուշեղյանի հետազոտությունը. բաղկացած է 360 էջից: Հեղինակը երկար տարիներ զբաղվել է Մովսես Խորենացու ապրած դարաշրջանի և նրա օգտագործած աղբյուրների քննության խնդրով: Գրքում գիտական շրջանառության մեջ են տարալեզու բազմաթիվ աղբյուրներ, ներկայացված է խորենացիագիտության անցած պատմությունը՝ հատկապես պատմահորն արժեզրկելու դիտակետից: Հերթական քննության նյութ են դարձել աղմկոտ ու սենսացիայի սիրահար հայագետներն իրենց մատուցած փաստարկներով և արժանացել են Ա. Մուշեղյանի հիմնավոր ընդդիմախոսությանը: Խորենացուն իր դարից տեղաշարժող կենդանի հայագետներ են Ռոբերտ Թոմսոնը և Ժան-Պիեռ Մահեն: Երկուսն էլ առաջնակարգ հայագետներ են, քաջատեղյակ հայ մատե-

<sup>1</sup> Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1902, էջ 1-6, 85-90, էջ 129-132, 193-198, 1903, էջ 30-36, 152-157, էջ 215-218 և այլն:

<sup>2</sup> F. F e y d i t. Considérations sur l'alphabet de saint Mesrop et recherches sur la phonétique de l'arménien (Deuxieme édition). Wien, 1982, p. 4.

նագրությանը, հմուտ հին ու նոր լեզուների, ինչպես նաև գրաբարի իմացության մեջ: Ա. Մուշեղյանն իրավացիորեն տարանջատում է այս երկու հայագետների տեսակետները, և նա իրավացի է: Ժան-Պիեռ Մահեն Ա. Խորենացու գլուխգործոցը ֆրանսերեն թարգմանել է դարավոր ընդունված ձևով՝ «Հայոց պատմություն» (*"Histoire de l'Arménie"*)<sup>3</sup>, իսկ Ռոբերտ Թոմսոնն իր թարգմանությունը դարձրել է «Հայերի պատմություն» (*"History of the Armenians"*)<sup>4</sup>: Նման խորագրով Խորենացու երկը ոչ ոք չի թարգմանել: Այս խորագրից թվում է, թե հայերը մի ցեղախումբ են, որոնք իրենց պետությունն էլ չեն ունեցել. բավական է հիշել միայն Տիգրան Մեծին և մ. թ. ա. VI դարում պատրաստված հույն աշխարհագրագետ Հեկատեոսի քարտեզը, որի վրա Կասպից ու Սև ծովերի միջև ընկած տարածքի վրա գրված է Армения<sup>5</sup>: Արժանահիշատակ է նաև Բեհիստունյան ժայռի վրա մ.թ.ա. 520 թ. արեմենյան գերդաստանի թագավոր Դարեհ Մեծի արձանագրությունը, որում Հայաստանը հիշատակվում է որպես առանձին պետություն<sup>6</sup>: Ահա նման փաստերն են հարկադրել Ա. Մուշեղյանին հանգամանալի անդրադառնալու Մովսես Խորենացու դարին:

Աշխատությունը բաղկացած է «Ներածությունից» և հինգ գլուխներից, վերջում ունի հավելված, որը նվիրված է ուրարտագի-

տական խնդիրներին [«Մովսես Խորենացու Հայկյան առաջին տոհմապետերը և նրանց Այրարատ (Ուրարտու) բնօրրանը»]: Ա. Մուշեղյանի գիրքն ունի գլուխների հետևյալ խորագրերը՝ գլուխ առաջին – Մովսես Խորենացու ծննդյան տարեթվի և ծննդավայրի հարցի շուրջ, գլուխ երկրորդ – Չորս Հայքերի առեղծվածը Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ում, գլուխերրորդ – VII դարի պարսկական մի արշավանք Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ում և դրա հերքումը, գլուխ չորրորդ – Վասպուրական նահանգի հիշատակումը Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ, գլուխ հինգերորդ – Գր. Խալաթյանցի և Կ. Թումանյանի դրոյթների սնանկությունը: Նկատենք, որ այս գրքի առանձին գլուխներ այնքան համոզիչ փաստեր ունեն, որ առանձին-առանձին էլ կարող են պաշտպանել հայ պատմահոր դատը:

Հինգերորդ գլուխը ներկայացնում է Գր. Խալաթյանցի և Կ. Թումանյանի կարծիքների սնանկությունը, ըստ որում Ա. Մուշեղյանը գրում է. «... պրոֆ. Ռ. Թոմսոնը Խորենացուն «մերկացնելու» գործում հենվում է մեծապես հենց Գր. Խալաթյանցի և Կ. Թումանյանի փաստարկների վրա» (էջ 300): Նա նկատել է, որ Գր. Խալաթյանցի եզրակացությունները, որոնք նա կատարել է աղբյուրագիտական քննությամբ, կարող են շփոթության մեջ գցել անգամ մասնագետներին (էջ 302): Ա. Մուշեղյանը տեղին է նկատել, որ Գր. Խալաթյանցի " Армянский эпос " и" Армянские Аршакиды ..." ուսումնասիրությունները եղել են հեղինակի մագիստրոսի և դոկտորի գիտական աստիճան ստանալու ատենախոսությունները: Եվ, ահա, այս փաստը խորհելու տեղիք է տալիս: Գր. Խալաթյանցի մերօրյա ընդդիմախոսի գիտական մոտեցման հիմքը հետևյալն է. «Արտաքուստ լուրջ թվացող և աղբյուրներով ամրապնդված նրա եզրահանգումները հողս են ցնդում, երբ հրաժարվում ես գնալ նրա նշած կեղծ հետքերով և դիմում իսկական սկզբնաղբյուրներին» (էջ 303): Համադրելով Փ. Բուգանդի, Մ. Խորենացու և VII դարի պատմիչ Սեբեոսի երկերում եղած փաստերը՝ Ա. Մուշեղյանը հիմնավորում է, որ Մ. Խորենացին երբեք էլ չի օգտվել Սե-

<sup>3</sup> Moïse de Khoréne. Histoire de l'Arménie, Nouvelle traduction de l'arménien classique par Annie et Jean-Pierre Mahé (d'après Victor Langlois), avec une introduction et des notes, Ed. Gallimard, 1993 (Introduction, pp. 9-93).

<sup>4</sup> Moïse de Khorénats' i. History of the Armenians, Translation and Commentary on the Literary Sources by Robert W. Thomson, revised edition, Caravan Books, Ann Arbor, 2006.

<sup>5</sup> И. Д. Р о ж а н с к и й. Античная наука. М., 1980, с. 68. Տե՛ս նաև Ա. Դ ը լ ի ա ն յ ա ն. Եվրոպացի հայագետներ, III, Վիկտոր Լանգրուան հայագետ, Երևան, 2003, էջ 109:

<sup>6</sup> Հետաքրքիր է, որ Մայրլ Առլեն Կրտսերը իր "Passage to Ararat" («Ուղևորություն դեպի Արարատ») գրքում, խոսելով իր ազգի վաղնջական արմատների մասին, ի թիվս այլ փաստերի, նույնությամբ մեջբերում է Դարեհ Առաջինի վերոհիշյալ արձանագրությունը (Michael J. Arlen. Passage to Ararat. New York, 1975, p. 19):

բեռնից, այլ առավել հին աղբյուրներից: Այս խնդիրը լուծելուն օգնում են Ա. Մուշեղյանի վկայակոչած հունա-հռոմեական պատմիչները:

Ա. Մուշեղյանը ապացուցում է, որ Գր. Խալաթյանը երբեմն գլխիվայր շրջում է փաստերը՝ մատնացույց անելով «Հայոց պատմության» մեջ դրվագներ, որոնք, իբր թե, պատմահայրը քաղել է Սեբեոսից, մինչդեռ Խորենացին դրանք վերցրել է ասորի պատմիչ Բարդաճանից: Ի դեպ, Վիկտոր Լանզուայի հրատարակած "Collection des historiens anciens et modernes de l'Arménie" - ժողովածուի մեջ Մովսես Խորենացու պատմության բնագրից գատված ձևով հրատարակված են նաև Բարդաճանի, նաև Մար Աբաս Կատինայի և մյուս հին պատմիչների երկերի այն հատվածները, որոնք Խորենացին օգտագործել է իր երկում<sup>7</sup>:

Նորագույն փաստերով Ա. Մուշեղյանը հերքում է նաև Գր. Խալաթյանի «ոսկե պատառաքաղ» բառի Մ. Խորենացու իբր թյուր ընկալումը, մինչդեռ նա այս, նաև «ձեռնոց» բառի սխալ մեկնաբանման արդյունքում սխալվողները Գր. Խալաթյանցն են և նրա հետևողները Ռ. Թոմսոնը: Խորենացին, ինչպես իրավացիորեն նկատել է Ն. Մառը, «գձեռե՛ս»-ը հասկացել է հատուկ պաշտոն՝ թագավորին զգեստավորող: Մինչդեռ Ռ. Թոմսոնը, հետևելով Գր. Խալաթյանցին, թարգմանել է "who dressed him in his gloves", որ նշանակում է՝ «որոնք հագցնում էին նրա ձեռնոցները» (էջ 323):

Ա. Մուշեղյանը խոսում է Մովսես Խորենացու երկում եղած հատուկ անունների խորենացիական մեկնությունների գիտական հիմքերի մասին, որոնք, սակայն, սխալ են մեկնաբանվել նրա քննադատների կողմից (էջ 44):

Ա. Մուշեղյանը քննադատում է նաև բուլղոս նրանց, ովքեր Մովսես Խորենացու ծննդավայրը Տարոնից տեղափոխում են «այսրկողմյան Հայաստան» ակամա մեծ ծառայություն մատուցելով մեր պատմությունն ու մշակույթը եռանդուն ձևով մերժող և աղքատացնող թուրք կեղծարարներին:

<sup>7</sup> V. Langlois. Collection des historiens anciens et modernes de l'Arménie, t. 1. Paris, 1867, p. 13-53, 57-67.

Այս հարցում նրա հենակետը մեր բանագիտության մեծ երախտավորի՝ Գարեգին Սրվանձոյանցի «Գրոց ու Բրոց» հրաշալի գիրքն է:

Գարնոր դիտարկում է Ա. Մուշեղյանի անդրադարձը Մ. Խորենացու պատմության առաջին գրքին կցված հավելվածին, որը կոչվում է «Ի պարսից առասպելաց, Յադագս Բիւրասպայ Աժդահակայ»<sup>8</sup>: Մի թե հարիր էր VII-VIII-IX դարերի պատմիչին այն աստիճանի անախրոնիզմի մեջ ընկնել, որ իր երկում հատուկ հատված մտցնելը գրադաշտական կրոնին վերաբերող առասպելներին այն դեպքում, երբ գրադաշտական կրոնը պարզապես վաղուց պաշտոնապես գոյություն չունեի Հայաստանին հարևան կամ Հայաստանին իշխող երկրներում, երբ Պարսկաստանն ընդունել էր մահմեդականությունը, և VII դարից սկսած մեր պատմիչները՝ Սեբեոս, Ղևոնդ, Հովհաննես Դրասխանակերտցի, Թովմա Արծրունի, գրում էին միայն մահմեդականության բերած կործանարար հետևանքների մասին, երբ ստեղծվել էին նոր վկայաբանություններ հանուն քրիստոնեության՝ ընդդեմ մահմեդականության ընդվզած նահատակների մասին, ինչպիսին էր Վահան Գողթնացու մասին պատմողը: Ուզում ենք հիշեցնել, որ 1881 թ. Փարիզում լույս տեսած Ավեստայի գիտական բնագրի առաջաբանում հայտնի ավեստագետ Բ. դր Հադլեն առանձին գնահատանքով է խոսում V դարի հայ պատմիչներ Մովսես Խորենացու և Եղիշեի մասին, որոնց պատմությունները բացարձակ փաստեր են պարունակում գրադաշտական կրոնի վերաբերյալ, որոնք հնարավոր չէ գտնել այլ աղբյուրներում<sup>9</sup>: Ուրեմն, գրադաշտական կրոնը հալածված և անհետացած էր Պարսկաստանում, մինչդեռ IX դարի հայրենասեր պատմիչը անհանգստացած և տագնապած հատուկ քննության հարց էր դարձրել գոյություն չունեցող կրոնը:

<sup>8</sup> Մ ո վ ս է ս Խ ո ռ է ա ց ի. Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Երևան, 1981, էջ 106:

<sup>9</sup> Տե՛ս Avesta, Livre sacré du zoroastrisme. Paris, 1881.

Ա. Մուշեղյանն էլ Ֆ. Կոնիբերի նման չի ժխտում, որ պատմահոր երկը ոսկեդարից հետո կարող էր դառնալ հետագա գրիչների ու խմբագիրների միջամտության գոհը, որովհետև նույն ճանապարհով անցել են և՛ անտիկ շրջանի համաշխարհային շատ հին մատյաններ և՛ հենց հայ միջնադարի բազմաթիվ երկեր<sup>10</sup>: Դրա վառ օրինակը Վարդան Այգեկցու առակների անցած ճանապարհն է, որի ամենատարբեր շերտերը մեծ հաջողությամբ տարանջատեց հայագիտության մեծ երախտավոր Նիկողայոս Մարը<sup>11</sup>:

Ա. Մուշեղյանը համոզիչ քննդիմախոսում է Խորենացու քննադատներին Բյուրանիա տեղանվան, Վասպուրական անվան գործածության և նման այլ մեղադրանքների համար: Նա լատին պատմիչ Ամմիանոս Մարկելիևոսի «Հռոմեական պատմության» մեջ մատնանշված ծանրակշիռ փաստարկներով ապացուցում է, որ Բյուրանիա տեղանունը հայտնի է դեռևս 330-ական թվականների վերջից: Վասպուրական անվան գործածությունից բացի Ա. Մուշեղյանը համոզիչ բացատրություններ է տալիս Մեծ Հայքի մարդպետության գործակալությանը:

Մովսես Խորենացուն ուղղված մեղադրանքները շատ-շատ են, իսկ Ա. Մուշեղյանի բացատրությունները դիպուկ ու բազմաշերտ: Այս գրքի նպատակը նույնն է, ինչ ունեցել է ոչ հայագրի և անկողմնակալ հայագետ Ֆ. Կոնիբերը՝ պաշտպանել գիտական ճշմարտությունը: Այդ առթիվ այս համոզիչ գրքի հեղինակն ունի իսկական հայրենասեր և անկողմնակալ գիտնականի հետևյալ եզրահանգումը իր կատարածի առումով. «Մովսես Խորենացին ու իր դասական «Պատմութիւն Հայոց»-ը արժանապես կհաստատվեն V դարի համաշխարհային պատմագրության հեղինակների և հուշարձանների շարքում» (էջ 18):

Այբերտ Մուշեղյանի «Մովսես Խորենացու դարը» շահեկան հետազոտությունը միջազգայնորեն առավել կարժևորվի, եթե թարգմանվի ռուսերեն, եվրոպական լեզուներով, հատկապես անգլերենով:

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

<sup>10</sup> Ֆ. Կոնիբերը գրում է. «Բայց նման վրիպակներ բավական հաճախ են գտնվում հայ և ասորի հիշատակարանների մեջ, և Մ. Խորենացու էջերը լի են այսպիսի վրիպակներով՝ հիշեցնելով մեզ, թե այն ժամանակ տակավին գոյություն չունեին Առձեռն Բառգրքեր (Handlexikon) կամ «Կենսագրական բառարաններ», մանավանդ Հայոց աշխարհի մեջ՝ պարագա, որ շատ անգամ մոռանում էին Մովսեսի խորագրյն քննադատները» (տե՛ս «Հանդես ամսօրյա», 1903, հուլիս, էջ 156):

<sup>11</sup> Sk' u H. M a p p, Сборники притч Вардана, ч. 1, Исследование. СПб., 1899.